ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Երկնային բոլոր բարձունքներ, Երկնքի անհուն, անսահման տեղեր, Երգակից դարձեք հրեշտակների այս վառ զողանջին՝

– Փա՛ռք Աստծուն, փա՛ռք Արարչին:

Ո՛վ մարդ, դո՛ւ էլ լսիր, Երգակի՛ց դարձիր: Ողջ տիեզերքն է պատմում Նրա փառքը: Անմասն մի՛ մնա: Դարձի՛ր խավարից դեպի Լույսի սահմանը, օրհնի՛ր Տիրոջը երկրի վրա և ձայնդ խառնիր երկնի զողանջին:

Օ՛, նայի՛ր, թե որքան մարդասեր է Աստված: Նա երկնքից խոնարհվել և փարվել է քեզ: Դու էլ բարձրացի՛ր և փարվիր Նրան: Ճչմի՛ր հպարտությունդ և երկրպագիր Նրան: Նա անմահ Թագավոր լինելով՝ դարձավ քեզ ընկեր:

Նա ամենակարող լինելով՝ դարձավ քեզ պես:

Նա Անժամանակ լինելով՝ դարձավ քո ժամանակակիցը:

Նա հավերժական լինելով՝ դարձավ քո ուղեկիցը:

Ողջունի՛ր, ընդունի՛ր և սիրի՛ր Նրան:

Այսօր և հավետ երանվում ես դու, Ո՛վ փոքրիկ մսուր սուրբ Բեթղեհեմի:

Որպես կենդանի տապանակ՝ Քո մեջ կրեցիր փառքերի թագավորին: Եվ առաջինը ամբավ հրճվանքով Դու կվարձացար, գերերջանիկդ բոլոր տեղերի:

Երկնային, սուրբ և կենդանարար Հորից Անժամանակ ծնվածին դարձար երկրավոր, բայց անապական Տաճար՝ քառապարդված հուր աստվածության անշեջ շողերով:

Ցնծա՛ և ուրախացիր, Մսուր հոգևոր, որ դարձար Մանուկ Հիսուսին ընդունարան:

Ցնծա՛ և վվարձացիր, մսուր կենդանի, որ դարձար Արդարության Արեգակին Աստվածային խորան: Քեզանով, Քեզանից հետո բոլոր Տեղերը արբագործվեցին աստվածաբուխ շնորհներով: Քեզանից ծաղկեցին վայելչապես բոլոր եկեղեցիները:

Դու խնկարկեցիր ողջ տիեզերքը՝ Քո մեջ կրելով Անբավելին երկնի և երկրի, գովելի և շնորհատու մսուր երջանիկ: Այսօր Ծննդյան հրափայլ լույսից Քեզ երգ ու գովեստ, ո՛վ Գերապանցյալ:

Այսօր և հավետ երանվում ես Դու, ո՛վ փոքրիկ մսուր սուրբ Բեթղեհեմի:

Այսօր վերստին շողում է Արդարության Արեգակը: Եվ հրեշտակների բազմությունները փառաբանում են Նրան: Այսօր վերստին շողում է Արդարության Արեգակը, դու էլ փառաբանիր Նրան, ով մարդ:

Բաց աչքերիդ խավարած պատուհանները և ըմպիր կապտաջինջ լույսը այս մեծ հանդեսի: Ո՛վ մարդ, հիշի՛ր Աստծուն և Նրա հույսով քեզ մխիթարիր, և փառաբանիր ծնունդը Նրա աշխարհպարունակ երգով օրհնառաք, երկրապարփակ քնարի ձայնով, տիեզերապատ սաղմոսերգությամբ: Ո՛վ մարդ, օրհնի՛ր Աստծուն և փառաբանիր անունը Նրա:

Կյանքի Ավետիսը, Բարի լուրը, արդ, ողողանջում է պանծալի ձևով՝ որպես քրիստոնեական փրկավետ կոչման Անլռելի կանգ: Եվ փարատում է մռայլ մթության չար հանցանքները, ունայն մտքերը, դատարկ գործերը, սին երազները և իր հանգերգով օրհնյալ, բարեգութ, տարածում է մի՛շտ Իր վորեղ խոսքը մշտնջենավոր և հաստատում է հավետ քաղցրալուր գործն իր կենդանի՝ լույս ողորմության:

Ո՛վ մարդ, ընդունի՛ր այդ Ավետիսը, և քեզ համար այն

թող դառնա կյանքում հուսադրություն, որ դու չմնաս անկենդան վիհում՝ լքված Արարչի պահապան Աջից, հեռու բարեգութ խնամող Աչքից, կարոտ՝ կարեկից ու բուժող Ձեռքից, այլ պայծառությամբ դու միշտ պճնվես Երկնային վորեղ սուրբ շնորհներով, և Ավետիսը քեզ համար դառնա Մեծ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ՝ հավետ կրկնվող:

Ո՛վ մարդ, Դու, որ ապրում ես կորստյան օթևանի մեջ և ընթանում կորստյան շավիղներով, առանց ունենալու լույսը երկնային հանդարտվի՛ր մի պահ, և ընթացի՛ր ուղիղ շավիղով դեպի երկնային Հոր օթևանը: Քանզի մարդկության ընծան թեթև ամպով երկիր իջավ և ողորմության դուռը բաց արեց քո հոգու առաջ, որ լսես Նրա կանչը կենսաբեր:

Լցվի՛ր աստվածային փառքով, մաքրի՛ր մթագնած միտքդ ախտածին և լուսապարդվի՛ր ընծայով վերին: Մի՛շտ հաճո եղիր երկնային կամքին և քո դառնացող աչքերն արցունքոտ փոխի՛ր ծիծաղկոտ վվարթ տեսության: Մարդկության ընծան, արդ, մոտենում է հոգուդ դարպասին և քեզ է ձայնում կանչով տիրական, քեզ քարոզողի ձայնին ունկնդիր՝ հյուսի՛ր խորանը քո սուրբ հավատքի սրտիդ բաց դաշտում և օրհնաբանի՛ր միշտ ուրախալի և վվարթարար փառաբանությամբ. մշտնջենավոր աղոթք առաքիր Երկնային Տիրոջ փառքին անքնին: